Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

Աշխատանքի ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ավտոմոբիլային բեռնափոխադրումների մասնագետ վարորդների և ավտոբուսի վարորդների դեպքում

միայն Գերմանիայի համար

Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես հերթագրվել: Հերթագրվել կարող եք միայն առցանց եղանակով: Առցանց հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքի միջոցով. www.eriwan.diplo.de :

- Ոչ գերմանալեզու փաստաթղթերը՝ բացառությամբ անձնագրի տվյալների էջի, պետք է ներկայացնել գերմաներեն հաստատված թարգմանությամբ:
- Վկայականները, դիպլոմները և նմանատիպ փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և ապոստիլով/լեգալիզացիայով: Բնօրինակները կվերադարձվեն:
- Վիզայի համար հնարավոր է, որ անհրաժեշտ լինի ԳԴՀ աշխատանքի դաշնային գործակալության (Bundesagentur für Arbeit) և համապատասխան վայրի Օտարերկրացիների հարցերով մարմնի (Ausländerbehörde) համաձայնությունը: Վիզան կարող է տրվել միայն, երբ դեսպանությունը ստանա այս համաձայնությունները:
- **Դիմումի քննությունը և մշակումը սովորաբար տևում է 6 – 14 շաբաթ**, առանձին դեպքերում՝ ավելի երկար:
- Ավիատոմսի ամրագրում վիզայի համար չի պահանջվում, խնդրում ենք ավիատոմս ամրագրել միայն վիզա ստանալուց հետո:
- Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար: Ոչ լիարժեք փաստաթղթերը կարող են դանդաղեցնել գործընթացը և հանգեցնել դրանց վերադարձի կամ մերժման: Դեսպանություն ուղարկված այն ֆաքսերը կամ գրությունները, որոնց վրա բացակայում է վիզայի գործի համարը, չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին:
- **Խնդրում ենք դիմումի վերոնշյալ մշակման ժամանակահատվածում, ձեռնպահ մնալ դիմումի ընթացքի վերաբերյալ հարցումներ անելուց:** Այդ հարցումները էապես ծանրաբեռնում են վիզայի բաժնի աշխատանքը, այդ պատճառով վիզայի բաժինը չի կարող պատասխանել:
- Վիզայի վճարը կազմում է 75 եվրո, որը վճարվում է դրամով՝ դիմումը հանձնելիս:
- Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) պետք է **ներկայացնել A4 ձևաչափով**՝ առանց ամրացնելու, կարելու և թափանցիկ թղթապանակների:

Սկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել բնօրինակով և մեկական պատճենով:
Խնդրում ենք փաստաթղթերը դասավորել այսպես.
- բոլոր բնօրինակ փաստաթղթերը՝ ստորև նշված հերթականությամբ.

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Կոնտակտային ընթացիկ տվյալները, ինչպես նաև հեռախոսազանգերի ժամանակացույցը կարող եք գտնել կայքում. https://eriwan.diplo.de/

- Դիմում-հարցաթերթիկը՝ հայտարարության հետ միասին, և բոլոր թվարկված փաստաթղթերի ընթեռնելի և ոչ մուգ պատճենները՝ ստորև նշված հերթականությամբ.

Անհրաժեշտ փաստաթղթեր

- գերմաներենով կամ անգլերենով լիարժեք լրացված դիմում-հարցաթերթիկ՝ ներառյալ Կացության մասին դաշնային օրենքի §54-ով սահմանված իրազեկումը: Հարցաթերթիկը կարող եք գտնել դեսպանության կայքում՝ սույն հղումով. https://videx-national.diplo.de ,
- լիարժեք լրացված և ստորագրված հայտարարություն հասանելիության (հղում) վերաբերյալ,
- 2 նոր, բիոմետրիկ լուսանկար, մեկը խնդրում ենք սոսնձել դիմում-հարցաթերթիկներին,
- գործող ճամփորդական անձնագիր, որը վավերական լինի առնվազն 6 ամիս, (անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ անձնագիրը տրված լինի ոչ ավելի վաղ, քան տասը տարի առաջ),
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, վիզա կամ որևէ այլ նշում,
- կրթության և աշխատանքային գործունեության վերաբերյալ առանց բացթողումների ինքնակենսագրություն գերմաներենով կամ անգլերենով,
- Եթե ունեք EU կամ EWR վարորդական վավեր վկայական.
  - EU կամ EWR վարորդական վավեր վկայականի բնօրինակը,
  - նախնական որակավորման (արագացված),
  - աշխատանքային պայմանագիրը՝,
  - Ekrlärung zum Beschäftigungsverhältnis ձևաթուղթը՝: – Այս ձևաթուղթը պետք է լրացնի ապագա գործատուն:
- Եթե դեռ **չունեք** EU կամ EWR վարորդական վավեր վկայական.
  - Աշխատանքային պայմանագիր, որը պարունակի նաև EU կամ EWR վարորդական վավեր վկայականի, ինչպես նաև (արագացված) նախնական որակավորման համար կազմակերպվող դասընթացների **մասնակցության պարտավորություն**:
  - Եթե Դուք որակավորման դասընթացների ժամանակ իրականացնում եք աշխատանքային այլ պարտավորություն (օրինակ՝ աշխատում եք բեռնապահեստում, տեխսպասարկման կենտրոնում, կամ որպես վարորդի ասիստենտ), աշխատանքային պայմանագրից և „Erklärung zum Beschäftigungsverhältnis“ ձևաթղթից պետք է բխի, որ աշխատանքային պայմանները դասընթացի ժամանակահատվածի համար կազմակերպված են այնպես, որ Դուք կարողանաք **15 ամսվա ընթացքում** ձեռք բերել վարորդական իրավունք և որակավորում՝ ներառյալ պահանջվող փաստաթղթերը:
  - Աշխատատեղի կոնկրետ առաջարկ՝ որպես մասնագետ վարորդ բեռնափոխադրման կամ մեծ ավտոբուսներով ուղևորափոխադրման ոլորտում՝ **միևնույն գործատուի մոտ** որակավորման դասընթացների ավարտից հետո աշխատելու համար:
  - Ekrlärung zum Beschäftigungsverhältnis ձևաթուղթը՝, որակավորման դասընթացներից հետո տվյալ աշխատատեղի առաջարկի համար . ձևաթուղթը պետք է լրացնի ապագա գործատուն:
  - Նախատեսած որակավորման դասընթացների վերաբերյալ տվյալները, օրինակ վարորդական իրավունքի և անհրաժեշտ նախնական որակավորման ձեռքբերման վերաբերյալ, գերմաներենի գիտելիքների կամ այլ՝ մասնագիտության հետ կապված հմտությունների ձեռքբերման վերաբերյալ: Դա կարող է լինել, օրինակ համապատասխան դասընթացի համար գրանցման հաստատումը:
  - Որպես մասնագետ-վարորդ աշխատելու համար այլ երկրում ստացած և վավերական վարորդական իրավունքի բնօրինակը՝ թարգմանությամբ:

- Լեզվական գիտելիքների վերաբերյալ վկայականը (առնվազն B1 մակարդակի)։
- Եթե լրացել է անձի 45 տարին. համապատասխան կենսաթոշակային ապահովման վկայականը (միայն, եթե աշխատավարձը չի համապատասխանում ընդհանուր կենսաթոշակային ապահովագրության մուծումների տարեկան սահմանաչափի առնվազն 55%-ին – 2024թ. դրությամբ՝.49.830 եվրո համախառն /տարեկան։)
- Այլ՝ ոչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք, օրինակ՝ Ռուսաստանի, Իրանի կամ Հնդկաստանի քաղաքացիները իրենց բնակությունը Հայաստանում հավաստելու համար պետք է ներկայացնեն Հայաստանի կացության թույլտվություն՝ ռեզիդենտ քարտ (առնվազն վեց ամսվա)։
- Բժշկական բավարար ապահովագրական պաշտպանվածության վկայական
  Եթե օրենքով սահմանված բժշկական ապահովագրության շրջանակում Ձեր ապահովագրական պարտավորությունը պետք է իրացնեք Դուք՝ որպես աշխատող, ապա պետք է նկատի ունենաք, որ այն սկսելու է գործել միայն Ձեր՝ Գերմանիայում բնակության վայրում հաստատվելու և աշխատանքային գործունեությունը սկսելու պահից։ Եթե Դուք ավելի շուտ եք մուտք գործելու Գերմանիա, Ձեզ հարկավոր է մինչև աշխատանքային հարաբերության մեկնարկը և օրենքով սահմանված բժշկական ապահովագրության մեջ Ձեր ներառվելը կնքել ժամանակավոր՝ մասնավոր բժշկական ապահովագրություն։ Ճամփորդական բժշկական ապահովագրությունները, հնարավոր է, չապահովեն ապահովագրական պաշտպանվածություն Ձեր ապահովագրության պայմաններում, եթե նախատեսված է երկարաժամկետ և տևական կացություն։ Հնարավոր է, որ այսպես կոչված „incoming“ ապահովագրությունները նույնպես չապահովեն այդպիսի պաշտպանվածություն։

<u>Ընդհանուր տեղեկություններ</u>

Այս հուշաթերթիկը տարբերակում է երկու մասնագետ վարորդների խումբ.

- նրանք, որ ունեն C1, CE1, C, CE, D1, D1E, D կամ DE դասերի EU/EWR-վարորդական իրավունք և (արագացված) նախնական որակավորում՝ ըստ «Բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների համար նախատեսված փոխադրամիջոցների վարորդների նախնական որակավորման և վերապատրաստման մասին օրենքի» (կրճատ՝ Մասնագետ վարորդների որակավորման օրենք),
- և նրանք, որ երկուսն էլ պետք է ձեռք բերեն Գերմանիայում (§ 24a Beschäftigungsverordnung).

Դեսպանությունը հուշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82–ի՝ յուրաքանչյուր դիմող պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, եթե որևէ փաստաթուղթ բացակայում է, դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել։

<u>Կարևոր ցուցումներ</u>

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ վիզայի դիմումը հանձնելիս որևէ այլ վճար, քան **դեսպանության շենքում՝ վիզաների բաժնի պատուհանի մոտ** գանձվող վիզայի վճարն է, նախատեսված չէ։

Դեսպանությունը **չի համագործակցում** տուրիստական ընկերությունների հետ։ **Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող գրասենյակներին։ Ճամփորդական կամ**

այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, չի համապատասխանում իրականությանը:

Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշումները կայացնում է բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում զումար մի՛ տվեք:**

Վիզայի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ **դեսպանության վիզաների բաժնի աշխատակիցներից**: Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն: